ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 01 >> ապրիլ 2015 N 27

ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի ԹԻՎ 13-22 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2015թ. մարտի 3-ին ընդունված

1.1) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2007 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 97 որոշմամբ հաստատված <<Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 13,

1.2) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2000 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 81 որոշմամբ հաստատված <<Հռիփսիմե առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 14,

1.3) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2007 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 96 որոշմամբ հաստատված <<Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 15,

1.4) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2008 թվականի հունվարի 21-ի թիվ 3 որոշմամբ հաստատված <<Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 16,

1.5) <<Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2008 թվականի հունվարի 18-ի թիվ 1 որոշմամբ հաստատված <<Արենի>> առողջության առաջնային պահպանման կենտրոն փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 17,

1.6) <<Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման արդյունքում ստեղծված <<Աղավնաձորի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը հաստատելու մասին>> թիվ 18,

1.7) <<Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման արդյունքում ստեղծված <<Զառիթափի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը հաստատելու մասին>> թիվ 19,

1.8) <<Արենի>> առողջության առաջնային պահպանման կենտրոն փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման արդյունքում ստեղծված <<Արենիի>> առողջության առաջնային պահպանման կենտրոն պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը հաստատելու մասին>> թիվ 20,

1.9) <<Հռիփսիմե առողջության կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման արդյունքում ստեղծված <<Հռիփսիմե առողջության կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը հաստատելու մասին>> թիվ 21,

1.10) <<Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության վերակազմավորման արդյունքում ստեղծված <<Մալիշկայի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը, փոխանցման ակտը հաստատելու մասին>> թիվ 22 որոշումները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Հ. ՍԱՐԳՍՅԱՆ